Ֆադեյ Սարգսյան

Հունվարի 10-ին 87 տարեկանում մահացավ ռեսպուբլիկական ականավոր գործիչ, հասարակական տեխնիկայի եւ կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի մեծ մասնագետ, ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: Որոշ խորհրդային Հայաստանի Մինիստրների սովետի նախագահ (վարչապետ) նա մեծ դեր է ունեցել մեր հանրապետությունում վերոհիշյալ բնագավառի զարգացման, համապատասխան մասնագետների պատրաստման, բազային մի ամբողջ շարք հիմնարկների ստեղծման գործում: Ֆադեյ Տաճատիչը (շրջապատում այսպես էին սիրում նրան կոչել) իր կազմակերպչական գործունեությունը շարունակել է նաեւ Հայաստանի անկախ պետականության պայմաններում, ավելի քան մեկ տասնամյակ գլխավորելով Գիտությունների ազգային ակադեմիան:

Պետական նշանավոր գործչի եւ գիտնականի մահվան կապակցությամբ հանգուցյալի հարազատներին եւ գործընկերներին ցավակցական ուղերձ են հղել ՀՀ նախագահը, կառավարությունը, ԳԱԱ-ի նախագահությունը, Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը եւ ուրիշներ: Վարչապետ Տիգրան Սարգսյանի նախագահությամբ ստեղծվել է կառավարական հանձնաժողով, որի որոշմամբ հանգուցյալի թաղման հոգեհանգիստը կկայանա այսօր՝ հունվարի 12-ին, ժամը 17:00-ին, Յա. Զարոբյան 10/1 հասցեում, իսկ վերջին հրաժեշտի արարողությունը՝ հունվարի 13-ին, ժամը 12-ից Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, իսկ հուղարկավորությունը՝ ժամը 14:00-ին, Երեւանի թաղման գերեզմանոցի պանթեոնում: